ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն_____դասվար_____

Թեմա_____Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառման արդյունավետությունը գործնթացում

Կատարող _____Նորա Մնացականի Անտոնյան

Ղեկավար _____Մ.Գ.Դ. Ջուլիետա Գյուլամիրյան

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ …….3
1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ. ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ (ԻՆՏԵՐԱԿՏԻՎ) ՄԵԹՈԴ …….....5
2. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ……...9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ …….....15
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ …….....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման տեմպը, ուսուցման ժամանակակից մեթոդները, երեխաների անընդհատ ինքնակրթության եւ զարգացման անհրաժեշտությունը, պարտադրում են ուսուցման գործընթացում կիրառել այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք բարձրացնում են կրթության արդյունավետությունը եւ որակը, ապահովում են ինքնուրույն ճանաչողական գործունեության շարժառիթներ, նպաստում են միջառարկայական կապերի ամրապնդմանը: Կրթության բարձր որակ ապահովելու եւ ուսումնական գործընթացում երեխաների ուշադրությունը պահելու, այն ավելացնելու համար անհրաժեշտ է ակտիվ, հետաքրքիր եւ ինտերակտիվ դասաժամի կազմակերպում: Այս պահանջներին բավարարում է ուսումնական գործընթացում ինտերակտիվ մեթոդների կիրառումը: Համաշխարհային մանկավարժական պրակտիկան հարուստ փորձ է կուտակել փոխգործուն մեթոդների տեսական մշակումների եւ գործնական կիրառությունների վերաբերյալ: Այսօր կիրառվում է փոխգործուն մեթոդների մեծ համախումբ, որն ապահովում է ուսուցման և ուսումնառության երեխայակենտրոն մոտեցում, համաձայն որի՝ յուրաքանչյուր երեխա պետք է դառնա պարապմունքի գործուն մասնակիցը՝ ինքնուրույն անցնելով գիտելիքների ձեռք բերման ճանապարհը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է վեր հանել մեթոդների առանձնահատկությունները եւ կիրառման անհրաժեշտությունը:

Հետազոտական աշխատանքի նպատակից բխում են հետեւյալ խնդիրները.

- Ուսումնասիրել մասնագիտական եւ մեթոդական գրականություն,
- Վեր հանել ուսումնական գործընթացում կիրառվող մեթոդները, դրանց տեսակները,
- Բացահայտել մեթոդների էությունը, սկզբունքները, առավելությունները, սահմանափակումները, մեթոդի կիրառման ժամանակ դրսևորվող մանկավարժական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ. ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ (ԻՆՏԵՐԱԿՏԻՎ) ՄԵԹՈԴ

Ուսուցման մեթոդը մանկավարժական գրականության մեջ բազմաթիվ, երբեմն իրարամերժ բնութագրումներ կարող է ունենալ. իբրեւ՝

- Ուսուցչից դեպի երեխա գնացող մտքի ճանապարհ,
- Երեխաների ճանաչողական գործունեության կազմակերպամն հիմքում ընկած տրամաբանական կատեգորիա,
- Երեխայի՝ ուսուցման նպատակներին ուղղված և որոշակիորեն կարգավորված գործունեություն,
- Ուսուցչի և երեխայի համագործակցություն։

Եթե ընդհանրացնենք, ապա կարող ենք ասել, որ ուսուցման մեթոդը մանկավարժա-վարժական գործունեության մի միջոց է, հնար, հիմնական գործիք, որով իրականաց-վում է դաստիարակի եւ երեխայի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքներին։

Գոյություն ունեն ուսուցման մեթոդների դասակարգման բազմաթիվ տարբերակներ, որոնց հիմքում դրվում են հետևյալ հատկանիշները.

- Ճանաչողության աղբյուրները (ուսուցման խոսքային, դիտողական, գործնական մեթոդներ)
- Ուսուցման տիպը (ուսուցման բացատրական-մեկնաբանական, պրոբլեմային-զարգացնող մեթոդներ)
- Երեխաների ճանաչողական ինքնուրույնության մակարդակը (ուսուցման վերարտադրողական, պրոդուկտիվ, էվրիստիկ մեթոդներ),
- Պրոբլեմայնության մակարդակը (ցուցադրական, մենախոսական, երկխոսական, էվրիստիկ)
- Դիդակտիկ նպատակները եւ գործառույթները (խթանման, կազմակերպման եւ վերահսկման մեթոդներ),

Այսօր ուսուցման մեթոդները պայմանականորեն բաժանվում են երկու խմբի՝

ավանդական եւ փոխներգործուն (ինտերակտիվ):

Ավանդական են բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկածեն պատրաստի տեղեկատվության (գիտելիքի) պարզ փոխանցումը երեխային եւ վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը:

Փոխներգործուն մեթոդների հիմքում երեխայի ինքնուրույն ուսումնական գործունեությունն է, ինչպես նաև գիտելիքի ձեռքբերման ընթացքին նրա անմիջական ու գործուն մասնակցությունը:

Բազմաթիվ հիմնական մեթոդական նորարարություններ այսօր կապվում են ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման հետ: Ինտերակտիվ նշանակում է փոխանցել կամ զրույցի, երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի կամ համակարգչի հետ: Այն ուսուցողական տեխնոլոգիա է՝ հիմնված խմբի անդամների փոխազդեցության եւ ուսումնառության խնդիրների լուծման, երեխայի ազատության վրա:
Չկան ինտերակտիվ մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր:
Ցանկացած դասարան, դասապրոցես եզակի է, անկրկնելի: Ուսուցչի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել համապատասխան իրավիճակին:

Այս մեթոդների առանձնահատկությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ երեխան գիտելիք է ձեռք բերում ինչ-որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի, ընդգրկվելով թե՛ անհատական, թե՛ խմբային աշխատանքներում: Այդ կերպ նա յուրացնում է համագործակցային, սոցիալական փոխազդեցության եւ հաղորդակցական, ինչպես նաեւ ձեռք բերած գիտելիքը կիրառելու կարողություններ:

Փոխներգործուն մեթոդներով ուսուցումը ենթադրում է գիտելիքների ու մտքերի փոխանակում, որը նպատակաուղղված է ոչ միայն նոր գիտելիքներ ստանալուն, այլեւ զարգացնում է իմացական գործընթացը՝ այն հնարավորինս ակտիվացնելով, ստեղծելով այնպիսի միջավայր, որում երեխան դառնում է իր ուսուցումը կազմակերպող անձ՝ գործընթացի սուբյեկտ՝ ինքնուրույնության բարձր աստիճանով: Ուսուցման փոխներգործուն մեթոդները նպաստում են նաև միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, քննադատական մտածողության զարգացմանը:

Պարապմունքների ընթացքում ժամանակ փոխներգործուն մեթոդների և հնարների կիրառումը հրաշալի արդյունք կարող է ապահովել, երբ խոսքը վերաբերում

է երեխաների շրջանում ճանաչողական կամ ստեղծագործական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև երեխաների ու մանկավարժների միջև փոխազդեցությանը։

Փոխներգործուն մեթոդների կիրառման կանոններն են.

1. երեխաներից ոչ մեկը չի կաշկանդվում՝ մտածելով, որ ինքը կարող է սխալվել,
2. դիմացինի կարծիքը չի մերժվում ոչ մեկի կողմից,
3. ցանկացած կարծիք կամ գաղափար խրախուսվում է:

Փոխներգործուն մեթոդներն արդյունավետ են հատկապես խմբային աշխատանքների կամ համագործակցային ուսուցման ժամանակ: Խմբի բոլոր անդամները պատասխանատու են դառնում նյութը յուրացնելու համար: Խմբային աշխատանքի մի մասը կարելի է առանձնացնել եւ կատարել անհատապես, սակայն մեծ մասը պահանջում է փոխգործուն աշխատանք, ընդ որում՝ խմբի անդամները մշտապես արձագանքում են միմյանց կատարած աշխատանքին, հարցեր են տալիս, քննարկում են կատարած եզրահանգումները եւ այլն: Փոխներգործուն մեթոդներով ուսուցման ժամանակ երեխաները դրսեւորում են բարձրակարգ մտածողություն, նյութի ավելի խորքային ընկալում, ավելի լուրջ վերաբերմունք ուսումնառության գործընթացին:

Ավանդականների հետ համեմատած, ուսուցման ինտերակտիվ մոդելներում փոխվում է նաեւ փոխգործակցությունն դաստիարակի հետ. նրա ակտիվությունն իր տեղն է զիջում երեխաների ակտիվությանը։ Ուսուցչի խնդիրն է ստեղծել պայմաններ նրանց նախաձեռնության համար: Ինտերակտիվ տեխնոլոգիաներում երեխաները հանդես են գալիս որպես լիիրավ մասնակիցներ, նրանց փորձը պակաս կարեւոր չէ դաստիարակի փորձից: Վերջինս ոչ այնքան տալիս է պատրաստի գիտելիքներ, որքան խթանում է երեխաների ինքնուրույն որոնումը: Ինտերակտիվ տեխնոլոգիաներում ուսուցիչը հանդես է գալիս մի քանի հիմնական դերերով: Նրանցից յուրաքանչյուրում նա կազմակերպում է մասնակիցների փոխգործողությունը տեղեկատվական միջավայրի այս կամ այն հատվածի հետ: Իրազեկիչ-փորձագետի դերում ուսուցիչը շարադրում է տեքստային նյութը, ցուցադրում տեսաշարքը, պատասխանում մասնակիցների հարցերին, հետևում է գործընթացի արդյունքներին եւ այլն: Կազմակերպչի դերում նա կազմակերպում է երեխաների փոխգործակցությունը սոցիալական եւ ֆիզիկական շրջապատի հետ (բաժանում է խմբերի, խթանում է նրանց

ինքնուրույն տվյալներ հավաքելը, համաձայնեցնում է առաջադրանքների կատարումը եւ այլն): Խորհրդատուի դերում ուսուցիչը դիմում է երեխաների փորձին, օգնում է գտնել արդեն ձեւակերպված խնդիրների լուծումը, ինքնուրույն ձեւակերպել նորերը եւ ալն:

Ինտերակտիվ ուսուցման սկզբունքներն են.

- փոխազդեցությունը,
- փոխուսուցումը,
- երեխայի ակտիվությունը,
- համագործակցությունը,
- ինքնաարտահայտման խրախուսումը,
- հետադարձ կապը:

Փոխներգործուն մեթոդների դերն է՝

- մտածողության զարգացում,
- առաջնային գիտելիքի ձեռք բերում,
- հաղորդակցական միջավայրի ստեղծում,
- ճանաչողական ակտիվության խթանում,
- ուսուցանողի եւ ուսանողների ընդգրկուն փոխազդեցություն,
- հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձեւավորում,

Գոյություն ունեն ուսուցման ինտերակտիվ բազմաթիվ մեթոդներ, ինչպես օրինակ՝ խճանկար,պրիզմա,բանավեճ, վենի դիագրամ, գուս /գիտեմ,ուզում եմ սովորել, սովորել եմ/ , գործնական եւ դերային խաղեր, նախագծային մեթոդ, t – աձեւ աղյուսակ, գաղափարների քարտեզագրում, մտածի՞ր զուգորդի՞ր, մտքեր փոխանակիր, խմբավորում, փոխներգործուն նշանների համակարգ, աշխատանք փոքր խմբերով եւ այլն:

2 . Ուսուցման ժամանակակից մեթոդների ընդհանուր բնութագիրը

Ըստ պրոֆեսոր Ջուլիետա Գյուլամիրյանի առավել ընդունելի է Մ. Դանիլովի եւ Բ. Եսիպովի բնորոշումը, համաձայն որի՝ «Ուսուցման մեթոդները ուսուցչի եւ նրա օգնությամբ երեխաների աշխատանքի իրականացման եղանակներն են, որոնց շնորհիվ վերջիններս ձեռք են բերում գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, ձեւավորում իրենց աշխարհայացքն ու զարգացման ճանաչողական ուժերը»:
Ուսուցման մեթոդներն ավանդաբար բաժանվում են 3 խմբի՝ զննական, խոսքային եւ գործնական, որոնք հիմնականում հանդես են գալիս փոխկապակցված:

Զննական մեթոդները կրտսեր դպրոցում հաճախակի են օգտագործվում, ընդ որում՝ կիրառվում են ավելի շատ դիտման, ցուցադրման մեթոդը եւ նրա տարատեսակները:
Կարևորվում է մասնավորապես իրազննությունը (խաղալիքներ, նկարներ, լուսանկարների դիտում, առարկաների նկարագրում, դիդակտիկ խաղեր, նկարների շուրջ պատմումներ), որն օգտագործվում է գիտելիքների ամրակայման, բառապաշարի հարստացման, կապակցված խոսքի զարգացման նպատակներով:
Խոսքային մեթոդները նույնպես լայն կիրառություն ունեն:
Գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցումն ու պատմումը, արձակ եւ չափածո ստեղծագործությունների անգիր անելը, զրույցները, բանավեճերը:
Խոսքային բոլոր մեթոդների ժամանակ, անշուշտ, կարելի է օգտագործել նաեւ դիտողական պարագաներ:

Խոսքային մեթոդները նույնպես լայն կիրառություն ունեն կրտսեր դպրոցում:
Գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցումն ու պատմումը, արձակ և չափածո ստեղծագործությունների անգիր անելը, զրույցները, բանավեճերը:
Խոսքային բոլոր մեթոդների ժամանակ, անշուշտ, կարելի է օգտագործել նաև դիտողական պարագաներ: Խոսքային մեթոդների արդյունավետությունը մասնավորապես ակնառու է ներկայացումների դիտման, դրանց քննարկման, ներկայացման թեմաներով (կամ կինոնկարների, կարդացած ստեղծագործությունների) բանավեճերի, հանդիպումների եւ խոսքային բազմազան վարժանքների կատարման ժամանակ:

Գործնական մեթոդների կիրառումը նպաստում է երեխաների ձեռք բերած գիտելիքների կիրառմանը, խոսքային ունակությունների ու կարողությունների կիրառման կատարելագործմանը: Գործնական մեթոդների թվին են պատկանում տարաբնույթ խոսքային վարժությունները, լեզվական խաղերը, խաղ-բեմականացումները, ուշագրավ թեմաներով հոգեբանամանկավարժական վարժանքները:

Վերարտադրողական մեթոդներից են նկարների դիտումները եւ դրանց բովանդակության քննարկումն ու վերարտադրումը, գեղարվեստական ստեղծագործությունեների ընթերցումը եւ պատմումը, տարաբնույթ նյութերի անգիր սովորելը, գրական ստեղծագործությունների բովանդակության հիման վրա իրականացվող խաղ-բեմականացումները, դիդակտիկ խաղերը: Սրանց օգտագործման ժամանակ երեխաները խոսքային նմուշի հիման վրա յուրացնում են որոշակի բառապաշար, խոսքային կառույցներ, դարձվածքներ, ընդօրինակում են պատրաստի խոսքը եւ այլն:

Ստեղծագործական մեթոդները նպաստում են կապակցված խոսքային արտահայտություններ կառուցելու կարողության ձեւավորմանը. երեխան ոչ թե վերարտադրում է իրեն հայտնի լեզվական միավորները, այլ ստեղծում նոր համակցումներ՝ առաջնորդվելով հաղորդակցման իրադրության պահանջներով, առանձնահատկություններով: Ստեղծագործական մեթոդներից են ամփոփիչ զրույցները, ընթերցածի ստեղծագործաբար վերարտադրումը, բնագրի ձեւափոխված պատմումը, իրադրությունային խաղերն ու երկխոսությունները:

ԽԻԿ համակարգ: Ժամանակակից կրթակարգի մեջ տեղ գտած բազմաթիվ մեթոդների մեջ իր անփոխարինելի տեղն ունի ԽԻԿ համակարգը, որը հստակորեն լուսաբանում է ողջ դասապրոցեսի անցկացման արդյունավետության աստիճանը:

ԽԻԿ համակարգը երեք փուլից կազմված ուսուցման կազմակերպման ռազմավարություն է: Այս համակարգով ուսուցման կազմակերպումը նպաստում է երեխայի քննադատական մտածողության, ինքնուրույն եզրահանգումներ անելու կարողության, ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Խ – խթանում

Ի – իմաստի ընկալում

Կ – կշռադատում

Խթանումը ԽԻԿ համակարգի առաջին փուլն է, որի նպատակն է քննարկման միջոցով վերհանել երեխաների ունեցած գիտելիքները նոր ներկայացվող նյութի մասին, այն կարելի է իրականացնել, օրինակ, մտագրոհի օգնությամբ:

Խթանման փուլը հետապնդում է հետեւյալ նպատակները.

- բացահայտել երեխաների նոր նյութի վերաբերյալ ունեցած գիտելիքները,
- ակտիվացնել երեխաներին՝ ներգրավելով նրանց քննարկվելիք նյութի մեջ,
- երեխաների մեջ ձեւավորել գիտտելիքներ եւ հմտություններ ձեռք բերելու ձգտում, շահագրգռածություն:

Իմաստի ընկալումը եռափուլ աստիճանի երկրորդ աստիճանն է: Այս փուլում հաղորդվում է նոր նյութը, տեղեկատվությունը կամ գաղափարը:

Իմաստի ընկալման փուլի նպատակներն են.

- երեխայի մոտ հետաքրքրության աճի պահպանումը
- տեղեկատվության ընկալման ապահովումը
- նոր եւ հին տեղեկատվության շաղկապումը եւ իմացության նոր կառույցի ստեղծումը:

Կշռադատումը ԽԻԿ համակարգի երրորդ փուլն է, որի ժամանակ սովորեցնողի դերը նվազագույնն է: Այն հիմնականում կրում է ուղղորդող, հուշող կարգավորող բնույթ: Վերջինս օգնում է, որ երեխան ինքը հանրագումարի բերի իր գիտելիքները, իսկ նորը դարձնի իր սեփականությունը:

Կշռադատման փուլում իրականացվում են հետևյալ նպատակները.

- երեխան նոր ստացած տեղեկատվությունը արտահայտի իր բառերով եւ ձեւակերպումներով
- երեխաների հետ ծավալել նոր նյութի վերաբերյալ քննարկում՝հնարավոր դարձնելով նույն գաղափարը ներկայացնել՝ այլ ձեւակերպումներով ու մոտեցումներով
- նոր գիտելիքների մաձուլում եւ դրանց աստիճանական ինտեգրում

Կշռադատման փուլում ևս կարելի է կիրառել տարբեր փոխգործուն մեթոդներ:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել պարապմունքի խթանման փուլում՝ «Մտագրոհ», «Խորանարդում», Խմբավորում», «Բանալի բառեր», «Պրիզմա», «Մտածիր, զույգ կազմիր, քննարկիր», «ԳՈՒՍ /գիտեմ, ուզում եմ սովորել, սովորել եմ/», «Դերային խաղ»:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել պարապմունքի իմաստավորման փուլում՝ « Տ-աձև աղյուսակ», «Վենի դիագրամ», «Զրույց», «Գաղափարների /հասկացությունների/ քարտեզագրում», «Փոխգործուն նշանների համակարգ», «Խճանկար», «Բանավեճ», «Շրջագայություն պատկերասրահում»:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել պարապմունքի կշռադատման փուլում՝ «Քառաբաժան», «Զնագնդի», «Իրավիճակների վերլուծության մեթոդ», «Ուղեղային/ մտային գրոհ կամ մտքերի տարափ»:

2.Փոխգործուն մեթոդների կիրառումը որպես դասապրոցեսի արդյունավետությունը բարձրացնելու միջոց

Մարկոս Ֆաբիոս Քվինթլիանոսի խոսքով՝ «Երեխան ոչ թե դատարկ սափոր է, որը պետք է լցնել, այլ ջահ է, որը պետք է վառել» միտքը դրված է ուսուցման փոխգործուն մեթոդների հիմքում: Դարերի խորքից եկած այդ իմաստուն գաղափարը համապատասխանում է արդի մանկավարժական մոտեցումներին: Ժամանակակից մանկավարժության կարևոր խնդիրներից մեկը ուսուցման-ուսումնառության արդյունավետության բարձրացումն է: Այսօր ձևավորվել են մանկավարժական տարբեր մոտեցումներ, որոնք միտված են բարելավելու

կրթության որակը:
Փոխգործուն մեթոդները նպաստում են երեխաների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացը հետաքրքիր և աշխույժ դարձնելու պայմանների ստեղծմանը: Մեթոդներն ուսուցմանը հաղորդում են ստեղծագործական-հետազոտական բնույթ, իհարկե, այս մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռքբերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում, այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն փոխգործուն մեթոդներով: Հարկ է նշել, որ փոխգործուն մեթոդները խարսխվում են ավանդական մեթոդներին եւ դրանք դարձնում ավելի ճկուն, ապահովում ուսուցման համագործակցության սկզբունքի արդյունավետությունը:

Փոխգործուն մեթոդների կիրառմամբ պարապմունքների պլանները կազմելիս պետք է առաջնորդվել աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքներով, որոնք ենթադրում են ուսումնառության ընթացքում երեխաների հնարավորինս մեծ ակտիվության ապահովում և ուսուցչի աջակից, խորհրդատու դերի հաստատում: Այդ իսկ պատճառով համառոտ ներկայացնենք փոխգործուն մեթոդի գործադրման քայլերը: Ուսուցիչն առաջադրում է քննարկվող հարցը: Նա ոչ թե ուսումնական նյութ է հաղորդում, այլ մեկնաբանում է հարցադրումը:

- Ոչ մեկը չի կաշկանդվում՝ մտածելով, որ ինքը կարող է սխալվել:
- Դիմացինի կարծիքը չի մերժվելու ոչ մեկի կողմից:
- Ցանկացած կարծիք խրախուսվում է:

Փոխգործուն մեթոդի կիրառումն ուսուցիչներին հնարավորություն է տալիս.

- Ակտիվացնել երեխաների մտածողությունը
- Հետաքրքիր քննարկումներ ծավալել
- Երեխաներին ակտիվորեն ներգրավել ուսման գործընթացի մեջ
- Նպաստել դրական փոփոխությունների ձեւավորմանը
- Երեխաներին հնարավորություն տալ ծանոթանալու տարբեր կարծիքների հետ
- Խրախուսել երեխաների ինքնարտահայտումը
- Ապահովել տեղեկատվության մշակումը:

Փոխգործուն մեթոդի անհրաժեշտությունն ակնառու է խմբային աշխատանքի կիրառման ժամանակ: Այն աշխատանքային մի ձև է, որն ուսուցումը դարձնում է հայտնագործություններ կատարելու գործընթաց: Խմբի բոլոր երեխաները պատասխանատու են աշխատանքի իրենց բաժինը կատարելու և նյութը յուրացնելու համար: Անհատապես հաշվետու լինելն սկսվում է, երբ յուրաքանչյուրի կատարած

աշխատանքը գնահատվում է և խումբն էլ տեղյակ է լինում այդ մասին, որպեսզի պարզ լինի՝ ով լրացուցիչ օգնության կարիք ունի իր աշխատանքի ընթացքում: Թիմի անդամներն ըմբռնում են, որ իրենք միմյանց հետ կապված են այնպես, որ թիմը չի կարող հաջողության հասնել, եթե յուրաքանչյուրն իր հերթին հաջողություն չունենա: Խմբային աշխատանքի մի մասը կարելի է առանձնացնել եւ կատարել անհատապես, սակայն մեծ մասը պահանջում է փոխգործուն աշխատանք, ընդ որում, խմբի անդամները մշտապես արձագանքում են միմյանց: Բացի ակադեմիական հմտություններ հաղորդելուց, երեխաներին օգնում և քաջալերում են յուրացնել ու զարգացնել հասարակական այնպիսի կարևոր ունակություններ, ինչպիսիք են վստահության զգացումը, լիդերությունը, որոշումներ կայացնելու,հաղորդակցության կոնֆլիկտի կառավարման կառողությունները:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ փոխգործուն մեթոդներով սովորած երեխաները դրսեւորում են բարձրակարգ մտածողություն, նյութի ավելի խոր ընկալում, սթրեսի եւ տագնապի ավելի ցածր մակարդակ, սովորելու եւ հաջողության հասնելու ուժեղ մղում, իրավիճակն ուրիշների տեսանկյունից դիտարկելու նուրբ ունակություն, ընկերների հետ ընկերական եւ աջակցային հարաբերություններ հաստատելու պատրաստակամություն, ավելի լուրջ վերաբերմունք ուսումնառության գործընթացին: Ուսուցումը փաստերի եւ գիտելիքների պարզ մտապահումից եւ վերարտադրումի վերափոխվում է նպատակաուղղված, բովանդակալից գործունեության: Հավաքելով տվյայները, վերլուծելով ուսումնական խնդիրը, ընդունելով այլընտրանքային տեսակետներ եւ օգտագործելով խմբային քննարկման ընթացքում հնչած տեսակետները երեխաները փնտրում եւ գտնում են իրենց հուզող հարցերի պատասխանները: եւ երեխաներՈւսուցչի ճիշտ ու նպատակային կազմակերպված հարցադրումներն անմիջականորեն նպաստում են խոսքի եւ մտքի զարգացմանը:
Այսպիսով, ուսուցումը փաստերի եւ գիտելիքների պարզ մտապահումից եւ վերարտադրումից վերափոխվում է նպատակաուղղված, բովանդակալից գործունեության: Ելնելով սրանից՝ կարող ենք պնդել, որ փոխգործուն մեթոդները հեշտությամբ կարող ենք համապատասխանեցնել պարապմունքներին:
Փոխգործուն մեթոդների կիրառումը կբարձրացնի պարապմունքի արդյունավետությունը, երեխաների ակտիվության մակարդակը, հնարավորություն կտա հաշվի առնելու նրանց անհատական առանձնահատկությունները եւ կազմակերպելու շերտավորված ուսուցում՝ չափորոշչային պահանջներին համապատասխան:

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքի արդյունքում հանգել եմ այն եզրակացության, որ ուսումնական գործընթացում երեխաների ուշադրությունը պահելու եւ այն ավելացնելու համար անհրաժեշտ է դա իրականացնել հետաքրքիր մեթոդներով: Իմ դիտարկումների ընթացքում ես հանգել եմ նաեւ այն եզրակացության, որ երեխայի՝ առանց շարժառիթի կամ թույլ շարժառիթով գործունեությունը ուսուցչի կողմից կիրառված ցանկացած ձեւերի եւ մեթոդների դեպքում կա՛մ ընդհանրապես չի իրականացվում, կա՛մ ծայրաստիճան անկայուն է լինում: Թե երեխան իրեն ինչպես է զգում որոշակի իրավիճակում, կախված է այն մեթոդների ընտրությունից եւ ջանքերի ծավալից, որոնք նա օգտագործում է իր ուսումնառության գործընթացում: Այդ պատճառով կարևոր է, որ ուսուցման ամբողջ գործընթացը երեխայի մոտ առաջացնի ինտենսիվ եւ ներքին դրդում՝ լարված մտավոր աշխատանքի համար:

Ուսումնասիրելով գիտամեթոդական գրականությունը, իրականացնելով հետազոտական աշխատանքները՝ հանգել եմ հետևյալ եզրակացությանը՝

- Ուսուցման փոխգործուն մեթոդները ուսուցումը դարձնում են խիստ յուրօրինակ ու առանձնահատուկ եւ այդ առանձնահատկությունն առավել ակնհայտ արտացոլվում է տարրական դասարաններում:
- Փոխգործուն մեթոդների կիրառումը ավանդական մեթոդների համադրմամբ կարող է արդյունավետորեն նպաստել դասագործընթացում երեխաների ակտիվ մասնակցությանը եւ ներգրավվածությանը:
- Ուսուցման փոխգործուն մեթոդները նպաստում են, որպեսզի երեխաները բովանդակության պասիվ ընկալողներից դառնան գաղափարների ակտիվ կառուցողներ: Այն նաեւ հնարավորություն է տալիս երեխաներին փոխազդելու միմյանց վրա, ինչը ավելացնում է սովորելու շարժառիթները եւ երեխաների ակտիվ ներգրավվածությունը:

Մեր ուսումնասիրությունների արդյունքում նկատեցինք, որ պարապմունքների թեմատիկ խմբերի ամփոփումը առավել հետաքրքրական է եւ արդյունավետ իրականացնել փոխգործուն մեթոդական հնարներով: Մեկ դասապրոցեսում, հատկապես թեմայի ամփոփման դասերի ժամանակ կարելի է կիրառել մի քանի փոխգործուն մեթոդական հնար: Օրինակ՝ <<Վենի գծապատկերը>>, <<Քառաբաժանը>>, <<Մտագրոհը>> կարելի է կիրառել թեմատիկ խմբի ստեղծագործությունների տարբեր խնդիրների, ձեռքբերումների ամփոփման նպատակով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

1. Ջ. Գյուլամիրյան – Տարրական դասարանների մեթոդիկա Երևան 2020թ
2. Կրթության արդի հիմնախնդիրները, դեպքերի ուսումնասիրություններ, Երեւան 2005:
3. Ս Մարության –Մանկավաժության հիմունքներ, Երեւան 2005:
4. «Հանրակրթության մասին օրենք» Երեւան 2020: